

ANECOTA OXONIENSIA

(Շարունակութիւն):

§ 12. Աւելի հիմնաւոր մի պատասխան գտնուեմք Էջմիածնի մատենադարանում պահուած մի ձեռագիր գրութեան մէջ, որի սնունն է՝ «Գիրք Էակաց»: Այս ձեռագրում կայ յիշատակարան քաղուած մի հին մատեանից, որից հեռեւեալն է առնուած:

«Արար և Մամբրէ և Պօղոս և Աբրահամ ճառս և ոչ սակաւս պէսպէս խորհրդոյ և արգ յետ քաղում ժամանակաց գրեաց զգիրքս զայս իբրև Աստուած հասոյց զմեզ ի ժամանակս այս յորում հ և զ էր թուականն Հայկ-Արամեան: Ես Գորքն 1) քարտուղարս Հայոց մեծաց և սուրբ թագաւորացն Պըռտոյ Սպաթար ստացող է գրոց այսմ: Բայց զարմանալի է ի նախկին յիշատակի գրոցս այսմիկ՝ եթէ գրեցաւ զիրքս այս է Էակըս հրամանաւ թարգմանեալ ի Յունաց ի հայս տեառն Յովհաննէսի Հայոց: Վկայ է այսմիկ Սարգիս արաբացի եպիսկոպոս ճշմարիտ վկայութեամբ, օրհնութիւն ամէն 2»:

1) Կոնիսերը կարգում է Կուրգէն:

2. Ծան. թարգ. Յարգելի պրօփեսորը չի նշանակել իր ձեռագրի համարը, իսկ մենք օգտուում ենք Թ. 736 օրինակից, որ տարբերում է պ. Կոնիսերի ձեռագրից պակաս. «նենալով the Lord John Chatolicos of the Armenians of the gabelenatzik, այսինքն աւել են «կաթողիկոս Հայոց ի գաւառէն գարեղենացւոց» խօսքերը. Թիւ 736 ձեռագրում վերևը առաջ բերած խօսքերից յետոյ կարգում ենք. «Ընթերցողք յիշեցէք զԺողովս ազգային հնութեանց և յիշատակարանաց ևս և բեւեռաձև արձանագրութեանց Հայաստանի և յատկապէս Արարատեան նահանգի, զմիաբանս Մայր Աթոռոյս Հայաստանեայց սրբոյ Էջմիածնի. զՄեսրոպը եպիսկոպոս Սմբատեանց

Այստեղ մենք ունինք մի յունական աղբիւր, որ թարգմանուած է հայերէն լեզուով Փրկչի 578 թ. բայց թէ ինքան հին է ինքը (բնագիրն) մենք չենք կարող իմանալ, այսքան կարելի է պարզել, որ նա կազմուել է Քրիստոսի մօտ 530 թ. նրա վերնագիրն է «Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դաւթի հարցմունք ընդ երկաթնակ չարավարացն»:

Ինչպէս վերնագիրը ցոյց է տալիս գրութեան հիմնական մասը կազմում է մի երկար և ձանձրալի հականեօտորական պատճառաբանութիւն, որը ի նկատի է առնուել Եփեսոսի ժողովին յանձնուելու: Նոյն շարագրութեան սկզբում և վերջում կան տեղեկութիւններ նաև յունական ուսման Հայաստանում տարածուելու մասին: Յառաջաբանից մենք իմանում ենք, որ Դաւիթ Անագթը, մականուանեալն փիլիսոփայ, այն հինգ հայ ուսանողներից մէկն էր, որոնք հինգերորդ դարու սկզբում Թէոդոսի հրաւէրքի համաձայն կոստանդնուպօլիս ուղարկուեցին պատուէր ստանալով պարսպել յունական կրթութեամբ և հայերէն թարգմանութիւններ անել: Նրա ընկերակիցներն էին Մովսէս քերականը, Մամբրէ փիլիսոփան, Աբրահամ հռետորը և Պաւղոսը: Կարձ ժամանակ Կ. Պօլսում ուսում առնելուց յետոյ, Յունաց կայսրը Դաւթին Հայաստան ուղարկեց, նորա հայրենի երկիրը: Նա եկաւ Կարնի ամրութեան վերակայուի մօտ, որ գտնուում է Երևանի

Նախիջևանցի . . . և ըն. և ըն. և ըն շարունակում է թուել մի առ մի ազգիս լուսաւորութեան, պայծառութեան, և ըն. համար արած մեծագործութիւնները, Այս անձն նման յիշատակարաններ խիստ շատ ունի, անմահանալու տենչը նրանում ըստ երևոյթին շատ զօրեղ է, բայց ցաւալի է, որ այդ նպատակի համար նաձեռնամուխ է եղել ամենաընդիր հայկական հին յիշատակարաններին, ամենալաւ ձեռագրերի վրայ գրելով իր անունը. մինչև անգամ իրանից յիշատակարաններ աւելացնելով: Օրինակներ շատ կան, բայց յիշենք մէկը. ձեռ. 1696-ի ԹՂ. 52 Սամուէլ Անեցու պատմութեան վերջում ազատ մնացած մագաղաթի վրայ գրել է հետևեալ յիշատակարանը, աշխատելով բնագրի գրութեան նմանելու. հետևապէս ձգտել բնագիրը կեղծելու. «Սամուէլ քահանայ Անեցի ժողովող գրոյս յամի մարդեղութեան Փրկչին ՌՃԾԱ և մերոյս թիւ Ու Ի Խ. ամի կաթողիկոսութեան Գրիգորի Գ. պահաւանւոյ և ի թագաւորութեան Հայոց Թորոսի Բ. ու:

մօտ մի հին ամուր տեղ է, այնտեղ ուր Հռովմայեցիք Տակիտոսի վկայութեամբ յաղթութիւններ են տարել և որը նախընթաց դարում վերանորոգել էր Հայոց թագաւոր Տրդատը: Սակայն մի զարմանալի ժամանակագրական սխալի շնորհիւ նա դուրս է գալիս ժամանակակից անձն Բարսեղ Կեսարացուն և Գրիգորին: Գրիգոր Նիւսացու և նրա եղբայր աստուածային Նազեանզենու օրով Աթէնքում Դաւթին առաջարկուեց փիլիսոփայական ուսուցչութեան մի առաջնակարգ ամբիօն և նոքա երկուսը՝ Մովսէսը և նա մօտ 30 տարի Աթէնքում մնացին իբրև ուսանողներ: Ապա հեռուում է նոցա մեծ հերքումը ընդդէմ Նեստորի Եփեսոսում փրկի 431 թ. և նոցա պատճառաբանութիւնը առաջ է բերուած իբրև գրքի գլխաւոր էական մասը:

Ժողովից յետոյ կայսրը այդ անձին յետ է ուղարկում հայրենիք նրան լաւ ընծաներ տալով ի միջի այլոց նաև իսկական խաչափայտից մի կտոր և բացի այդ նա բերում է իր հետ բաւական թուով գրքեր, որ Յունաստանում մնացած ժամանակամիջոցում թարգմանել էր իր մայրենի լեզուով: Նոքա վերագառնում են հայրենիք և տեղեկանում են, որ իրանց հայրենակիցները մահու և կեանքի պատերազմ են մղել Պարսից թագաւոր Յաղկերս երկրորդի դէմ՝ քրիստոնէական ուղղափառ հաւատի համար և այդ պատերազմում ընկել է քաջն Վարդանը: Այդ պատերազմը կատարուել էր 451 թ. 20 տարի Եփեսոսի ժողովից յետոյ: Ապա շարունակում է պատմութիւնը. « իբրև զայս ամենայն կատարածս տեսեալ Մովսէսի և Դաւթի ոչ կամելով յայտնելով զինքեանս աշխարհիս Հայոց, այլ գաղտ ի ծածուկ կամելով կեալ, զի էին Աթենականքն այն ծերացեալ և էր աշխարհն Հայոց աւերեալ: Եւ Մովսէս ծածկէր զինքն կարկատուն զգեստովն և գծուծ կերպարանօք: Դնացեալ ի գեղ մի ի քաղաքս դաշտին և կացեալ անդ որպէս զմուրացիկ և ոչ ոք էր որ ճանաչէր զնա: Իսկ Դաւիթ և Մամբրէ և Պօղոս և Աբրահամ ընկերք Մովսէսի կային երեւանի: Եւ էր ի ժամանակին յայնմիկ կաթողիկոսն Հայոց տէր Գիւտ՝ աշակերտակից Մովսէսի . . . : Եւ արարին խնդիր Մովսէսի ընդ ամենայն աշխարհն Հայոց և ոչ գաին զնայ . . . իսկ հայրապետն

Գիւտ ի շրջելն իւրում եկեալ ի գիւղն յայն որ էր թագուցեալ անթագչելի գանձն և անօթն լուսոյ Մովսէս . . . և ձեռնագրեաց Մովսէս արքեպիսկոպոս . . . և խնդրեցին ի նմանէ գրով տալ նոցա զպատմութիւնն Հայոց: Իսկ նա սկսեալ գրէ զՀայոց պատմագիրն և այլ բազում ինչս պէսպէս ճառեալ ի տնօրէնութիւնն Փրկչին և բազում ինչ արարեալ և զքերականին մեկնութիւն և արարին զեղանակս զերաժշտականաց ձայնաւորս բազումս ի պէտս եկեղեցւոյ . . . Եւ Դաւիթ գրեաց զսահմանացն գիրսն. զոր էր առեալ ի փիլիսոփայից, արար և զմեկնութիւնն քերականին: Եւ ոչ ժամանեցին ելանել ի խաղաղական ժամանակի. զի զառլցեալ և զամբարեալ զգանձն զայն վաղ ժամանակաց ամանի պահեալ ունէին, զոր և ընդ իւրեանս տարան առ տուն պարգեւաց և նընջեցին բարւոք ի Քրիստոս:

Սոյն օտարոտի յիշատակարանի մէջ կայ մի ժամանակագրական անպատեհութիւն, որ ծագել գրողի ցանկութիւնից ցոյց տալ թէ ինչպէս Հայերը մտաւորապէս աւելի քիչ աստիճանով են կախուած եղել Յոյներէրից: Սակայն այս նկատելով Հանգերձ տեղիք չկայ կասկածելու, որ Հինգերորդ դարու առաջին կէսում Աթէնքում ապրում է մի Հայ՝ Դաւիթ անունով, որ պարապած էր յատկապէս փիլիսոփայութիւն ուսուցանելով: Հետեւապէս Մովսէսի հետ նրա Հայաստան վերադառնալու պատմութիւնը շատ հաւանական է: Նոյն դարու կիսում Պարսից կառավարութիւնը արգելում է Մեծ Հայքում յունական գրքերը և դպրութիւնը. սրտաճառը քաղաքական էր. որովհետեւ նոքա կասկածանքով էին նայում, չլինի թէ իրենցից կախում ունեցող երկրի և յունական կայսրութեան մէջ միօրեւ դաշնադրութիւն հաստատուի: Յունաց գրականութեան դէմ՝ յարուցած հալածանքը սեղմեց, կանգնեցրեց Հայոց գրականութեան զարգացումը հէնց նոյն իսկ նրա որրորանի մէջ, սակայն այս մտաւոր կապի ընդհատումը, որով Հայ ազգը միացած էր Կոստանդնուպօլսի և Աթէնքի հետ, նպաստեց որ Հայերը պահպանեցին իրենց ազգային եկեղեցու անկախութիւնը:

Շատ կարելի է Արիստոտելի և Պորփիրի գործերի յունարէն մեկնութիւնը, որ յայտնի է apo phones Dabid անունով, այն հայ

ուսումնականի գործն է որ անցրելէ Աթէնքում մօտ երեսուն տարի ֆրկչի 406ից մինչև 451 թւականներում:

§ 13 Սակայն «լատն ստորոգութեանց»-ի և «յազագս մեկնութեան»-ի մեկնութիւնները մնում են հանելուկ: Յուսալով որ մասնագիտօրէն Արիստոտելով պարագողներից մէկը կարող է նրա բնագիրը գտնել առաջ եմ բերում նրանից մի քանի օրինակներ: Իմ թարգմանութեան մէջ տեղ տեղ հարցական նշան եմ դնում, որովհետև նշանակութիւնը հաստատ չգիտեմ և բայ եմ թողնում, որտեղ բնագիրը աղջատուած է:

Հ ր ա տ ա ր ա կ ու թ իւ ն Բ ե կ կ եր ի էջ 1 a. 1.

Homonyma gignetai kata dyo tropus, kata tychen e kata dianoian. Dianoia de kata axioma (?), kata mnemen, kat' elpida, cat' eychas, kat' eicona, kath' homoioteta. . . . e kata syzygias steressin hosper monochiton . . . osper athletes: ¹

Վերև յառաջ բերածը համեմատիր Anonymi in Aristotelis Categorias Paraprasie, որ հրատարակուած է յունարէն մեկնութիւնք Արիստոտելի (Commentaria in Aristotelem graeca) շարքում հատ. 23, մաս 2. էջ 1, 2: Հայերէնը ըստ երևոյթին, սոյն մեկնութեան մի շատ խեղջ համառօտումն է: Ուստի համեմատիր բերլինում հրատարակած Արիստոտելի հատ. 4 էջ 42 b. 13 Դաւթի մի ծանօթութիւնը. phere eipomen ten diairesin ton apo tyches. Միայն յունարէնին կցած ծանօթութիւնը բաւականի ճաղաղ է և չէ նմանւում հայերէնին:

Հ ր ա տ . Բ ե կ կ եր ի էջ 1:

1 a. b. Synónyma di' ekeino legetai hoti ei kai diaphora en tois onomatos moriois hen kai tauto semainei kata ton tes usias logon, hosper aph henas kai pros hen.

1. (Ծան. թարգ. Այս ինչպէս նաև հետեւեալում առաջ բերուելիք շատ կտորներ դրուած են յունարէն բնագրի լեզուով առանց թարգմանութեան, քանի որ հեղինակը ենթադրում է, Արիստոտելով հետաքրքրուող անձն կիմանայ նրա լեզուն: Մենք դնում ենք յունարէն բնագիրը լատիներէն տառերով, որովհետև Ս. Եջմիածնի տպարանում յունարէն տառեր չկան:

1. a. 12. diasaphei ten paronomasian kata treis tropus. to symphonein men ton proton phthongon, diapherein de ten hystaten syllaben. horismos (?) tu pragmatos, spudaios kai spudaiotes.

1. a. 16. Hos diplu ontos tu logu, to men gar en dianoia, to de en prophora. to prophora men esti phone semantike. to de dianoia noema kai eikon pragmaton. isteon hoti uk aiei hai phonai e noemata hepontai pragmasin. alla eniote tas phonas men symbainei einai haplas, ta de noemata syntheta. hoion trecho e anagignosko. eniote de hai men phonai synthetai, ta de noemata hapla. Hoion ei tis eipoi anthropon zoon, logikon thneton. all' estin, hoti hai te phonai haplai kai ta noemata, hoion Sokrates e Homeros. esti de kai hoti hai te phonai synthetai kai ta noemata, hoion Sokrates philosophei e Homeros poiei, *Այն հոտուածը համեմատիր* Anonymi paraphrasis էջ 5. 11. 2—15.

Առ ստիպւ մի ընդհանրութիւնը անցնենք ստորոգութեանց մեկնութեանը. 1 b. 25-2 a. 10. երկմութիւնից ազատելու նպատակաւ անգղիերէն առաջ կը բերեմ, ¹ իսկ աւելի բացայայտութեան համար գործ կը դնեմ տեղ տեղ յունարէն դարձուածներ:

Բ Ե Կ Կ Ե Ր Ի Հ Ր Ա Մ.

1. b. 25-2 a. 10. «Նա գոյացութեան երկրորդ գասաւորութիւնն է ձեռք առնում, ինչպէս անուանեցինք մենք վերեւում: Ներկայումս նա աչքի չի անցնում տասը սեռը. պատճառ նա առաջուց երկուսի բաժանեց. գոյացութեան (usia) և պատահման (Symbebes): Գոյացութիւնը ըստ կերպի պարզ է (hapla to eidos), բայց պատահումն այնպէս չէ: Աւելի շուտով նա բազմապատիկ է (polytropon), և սովորաբար որպէս զր համաձայնեցնի նրա բնութեան յարմար կերպերը (kata ta en auto pephykota gene) նրան բաժանում է: Նրա կերպերի անունները տարբերում են, սակայն գոյացութիւնը մէկ է: Եթէ նորա բոլորը ի մի հաւաքուին թուով տասը կոտայուն, այդտեղից ծագում է, ինչպէս մենք նախընթացում նկատեցինք, մեր շարադրութեան ախաղոսի ստացումն»:

«Մենք պէտքէ մեր ուշքն ու միտքը դարձնենք նրա ասած հետեւեալ

¹ Ծան. Հասկանալի է որ մենք հեղինակի անգղիերէնի տեղ հայերէն կը դնենք.

խօսքերի վրայ՝ ton kata medemian symploken legomenon hekaston etai usian semainei e poion կամ տասը ստորագութիւնից մի որեւէ ուրիշը՝ որով մենք պէտքէ պահանջենք այս խօսքերը քննութեան ենթարկել ոչ միայն ըստ նոցա ձայնին, այլ նաեւ ըստ նոցա պարունակած մտքի։ Պատճառ եթէ մենք միմիայն ձայներին հետեւենք ինչպէս հարկն է չենք կարող ճանաչել նրա ասելու եղանակի աւել կամ պակաս ճշաութիւնը։ Օրինակի համար վերցնենք — trecho, այստեղ մի պարզ ձայն է։ Սակայն միոքը պահում է միացրած նրա ամբողջութիւնը։ Որովհետեւ նա իր մէջ պարունակում է «ես» գերանունը, այնպէս որ ոչ մի տարբերութիւն չկայ եթէ մենք ասելու լինենք trecho կամ ego trecho։ Նոյն եղանակով իւրաքանչիւր ոք կարող է musikos բառի մասին մտածել իբրեւ մի առարկայի մասին, որովհետեւ ձայնը միակ է։ Պատճառ նրա մասին մտածում են իբրեւ միակ առարկայի վրայ (hen ti)։ Պատճառ եթէ քննէք իմանալու համար ինչ է mosikosը, դուք երկու առարկայ կրգտնէք և ոչ մի։ Որովհետեւ musikos նշանակում է մի անձն, որ քաջալարժ է երաժշտական ձայների մէջ։ Հետեւապէս երաժիշտը բաղկացած է մարգուց և միւլնոյն ժամանակ արուեստից, ուրեմն պարզ է նա երկու է և ոչ մի։ Սակայն եթէ մէկը զննի ասելու «ինչու է նա այգպիսի օրինակ վերցնում» թող նա հասկանալ, որ նա ըստ իւր հրահանգի բոլորովին օրինակ չի բանեղնում, այլ միայն նրա համար սրպէս զի աւելի հեշտ հասկանալի լինի սովորողների կողմից։ Այս բառերից բացի նա ինչ բառեր է աւելցնում (°)։ Նա յիշատակում է բացասութիւն և դրականութիւն, մի նպատակի համար ցանկանում է մեզ սովորցնել։ (°) Որովհետեւ նա հակամիտ է ներկայումս առաջ դնել նախընթաց առաջարկութիւնը։ Պատճառ անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր բացառութիւն կամ դրականութիւն մի սելլոգիստիքական (հաւաքաբանական) նախնիաց առաջարկութիւն լինի, և որ նախնիաց առաջարկութիւնը (Premiss) կամ ուղիղ լինի կամ սխալ։ Հետեւապէս հաստատութիւնը կամ ժխտում է կամ պիտի ուղիղ լինի կամ սխալ, ինչպէս նա ինքն է ասում։

Այս վերին աստիճանի պարզ մեկնութիւնը դժուար ճանաչելի էր այնպէս ինչպէս նա հրատարակուած է Բերլինի Արխատոտեի

չորրորդ հատորի ծանոթութեանց էջերում, և այդ ծանոթութեանց մէջն էր Դաւթի յունարէն մեկնութիւնից քաղուածքներ հաղորդած:

Թողէք վերցնենք հայերէն մեկնութիւնից ուրիշ օրինակ, որ բացառուում են յաղագս մեկնութեանի 16 ա. 1. 2 խօսքերը: Այդ հետեւեալն է.

«Մենք նախապէս սահմանում ենք, որ այս դրամաբանական շարադրութեան ամբողջութեան նպատակն է հասնել ցուցական հաւաքաբանութեան (syllogism): Սակայն, որովհետեւ հաւաքաբանութեան մէջ մի քանի սխալներ կան մենք պէտքէ ծանոթանանք նոցանից իւրաքանչիւրի հետ: Պատճառ միւսի ծանոթութեան միջոցաւ մենք թափանցում ենք ցուցական հաւաքաբանութեան մէջ: Սակայն անկարելի է յիշած հաւաքաբանութիւնից մէկը կամ միւսը ճանաչել, եթէ նախապէս չենք սովորել թէ ինչ է հաւաքաբանութիւնը: Բայց հաւաքաբանութիւնը ինքը պարունակում է նախնթաց առաջարկութիւններ կամ առաջադրութիւններ (proposition). և նախնթաց առաջարկութիւնն է մի ուրիշ Kataphatikos կամ apophatikos կամ logos tis»:

«Լաւագոյն է սկսել ճառել բանի (logos) և նրա մասերի վրայ, և ապա անցնել նախնթաց առաջարկութեանց ուսուցման (didaskalia), նրա մասին ինչ նա տալիս է իր աշխատութեան մէջ: Որովհետեւ որպէսզի բացազրի ի՞նչ է անունը (ti onoma), ի՞նչ դարձուածքը (ti rema) և բանը (Kai logos) նա կանգ է առնում դրականութեան (kataphasis) և բացասութեան (apophasis) և ապա ցուցական բանի (apopphantikos logos) վրայ, քանի որ նրանցից է բաղկացած նրա նախնթաց առաջարկութիւնները»:

(Շարունակելի).